№ 212 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30 1904 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30 № 212

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

Յովսէփ աւագ քահանայ Ամիրաղեանցը և իր երէցուհի Աննա Դաւթեանը, Նիկողայոս Գրիգորեան Ռափայէլեանցը և իր ամուսին Եղիսաբէթ Դաւթեանը ցաւօք սրտի խնդրում են իրանց ազգականներին և բարեկամներին, որ շնորհ բերեն ներկայ հոկտեմբերի 3-ին, կիրակի օրը՝ Քութայիսի հայոց եկեղեցին, ուր կը կատարվի իրանց իրանց սիրելի հօր՝

ԴԱՒԻԹ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԵԱՐԱԼԵԱՆՑԻ

թաղման տաբելիցի հոգեհանգիստը. պատարագի սկիզբն է 10 ժամին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ համայնքի մասին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Հալաբարի ժողովրդական թատրոն. Նամակ Ցշնայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Նամակ Թաւրիզից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իրանդիան «Հօմ-բուլ»-ից յետոյ և ազգայնութեան կռիւը։

ԴԱՐՁԵԱԼ ՀԱՄԱՑՆՔԻ ՄԱՍԻՆ

Արևմտեան Եւրոպայում չը կայ ներկայումս համայնական հոդատիրութիւն։ Ճիշդ է, մի ժամանակ նա գոյութիւն է ունեցել այնտեղ և կազմում է եղել հողատիրութեան իշխող ձևը։ Սակայն ժամանակի ընթացքում նա քայքայվել է և տեղի տուել մասնաւոր սեփականութեան։

Ուրիշ երևոյթ ենք տեսնում Ռուսաստանում և մասնաւորապէս Կովկասում։ Այստեղ դեռ պահպանվել է համայնական հողատիրութիւնը և շատ տեղերում ոչ միայն չէ կորցրել իր կենսական նշանակութիւնը, այլ և երբեմն ցոյց է տալիս ներքին զարգացման և կատարելագործութեան մի քանի նշաններ։

Կը դիմանայ արդեօք համայնական հողատիրութիւնը կեանքի նոր պահանջներին և կը նպաստի տնտեսական—հասարակական առաջադիմութեան, թէ նա հնացած և մաշված մի հիմնարկութիւն է, որ խոչընդոտ է հանդիսանում կեանքի նոր շարժումների համար և դատապարտված է ոչնչացման։

Այդ հարցը հեռաքրքրական հարց է, որ ունի գործնական նշանակութիւն, որովհետև նրա այս կամ այն լուծումից են կախված մի շարք գործնական ձեռնարկութիւններ կեանքի մէջ։

Մենք պաշտպան ենք հանդիսացել համայնական հողատիրութեան, միևնոյն ժամանակ ցանկութիւն յայտնելով, որ որոշ կարգ ու բարւոքումներ մտցնվեն այդ հողատիրութեան գործնական արտայայտութիւնների մէջ, որպէս զի նա կարող լինի կատարել իրան վերապահված դերը կեանքի մէջ։

Պարզենք մի հանգամանք վերաբերեալ շօշափած հարցին։

Մենք գիտենք, որ Արևմտեան Եւրոպայում և Ամերիկայում խոշոր դրամագլուխը և առհասարակ փողային տնտեսութիւնը մեծ զարգացում են ստացել։ Միևնոյն ժամանակ գիտենք և այն, որ այդ երկիրներում հողատիրութեան վիճակը զանազանակերպ է, օրինակ, Ֆրանսիայում տիրում է մանր հողատիրութիւնը, իսկ Անգլիայում՝ խոշոր. Ամերիկայում կալուածքները մեծ մասամբ միջակ և փոքր տարածութիւն ունեն. Բելգիայում, ուր կապիտալը ստեղծել է գործարանական կեանք հաւասար անգլիականին, պահպանվել է շատ տեղերում մանր հողատիրութիւնը։ Գերմանիան պարունակում է իր մէջ թէ շատ խոշոր, թէ միջակ և թէ բազմաթիւ մանր հողատէրեր։

Կարծել թէ հողատիրութեան վիճակը չէ ազդում բնաւ գործարանական կեանքի և առհասարակ փողային տնտեսութեան վրա, դա նշանակում է ծանօթ չը լինել Եւրոպայի տնտեսական կեանքի պատմութեան հետ։ Մենք գիտենք, թէ ինչ փոփոխութիւններ տեղի ունեցան Անգլիայի հողատիրութեան մէջ վերջին երկու դարերի ընթացքում և թէ ինչպէս անհող գիւղացիների մի մեծ բազմութիւն նետվեց հրապարակ և նիւթ դարձաւ գործարանական խոշոր ու համարձակ ձեռնարկութիւնների համար։

Այդ այդպէս է։ Սակայն, մեր ժամանակում այլ ևս ոչ ոք չէ համարձակվում գիւղացիներին «անհող» թողնելու մասին ծրագիրներ առաջ բերել։ Հասարվում է ճշմարտութիւն այն, որ գիւղացին պէտք է հող ունենայ և որ նա պէտք է չը քշվի, չը հեռացնվի իր հողից։

Այդ ոգով կատարվեց ճորտերի ազատութիւնը Ռուսաստանում։ Այդ ոգով էլ խմբագրվել են այն ծրագիրները, որոնք վերաբերում են Կովկասին։

Ուրեմն գործնական հարցը, որ կարող է առաջարկ գալ, այն կարող է լինել թէ արդեօք նպատակայարմար և օգտաւէտ պէտք է համարել համայնական հողատիրութիւնը, որ ներկայումս գոյութիւն ունի, թէ նրան բոլորովին ոչնչացնել, բաժանելով հողը առ միշտ գիւղացիների մէջ և այլ ևս չը հոգալ համայնքի իրաւունքների մասին գիւղական հողի վրա։

Բացատրութեան արժանի է այն, որ մեր գիւղերում եղած համայնական հողատիրութիւնը կրում է իրապէս մանր հողատիրութեան բնաւորութիւն, որովհետև գիւղացիները օգտվում են հողից բաժան-բաժան, իբրև մասնաւոր անձեր։ Այդ գիւղացիները տալիս են պանդուխտների մի որոշ թիւ, որոնք խմբվում են մեր քաղաքներում և մեր գործարաններում։ Եւ անկասկած, գործարանական կեանքի զարգացումը պէտք է օրէցօր դրաւէ աւելի ու աւելի մեծ բազմութիւն մեր գիւղերից դէպի կենտրոնները։

Համայնական հողատիրութիւնը ներկայումս առանձին ձևով չէ խանգարում և չէ նպաստում գործարանական կեանքի զարգացման. իսկ մի և նոյն ժամանակ նա կատարում է որոշ կենսական դեր այն անձանց համար, որոնք պէտք է գործեն գիւղական շրջանում։ Մեր գիւղական համայնքը—իրական երևոյթ է, կեանքի և իրականութեան սեփականութիւն։ Նա տուել է և տալիս է իր դրական օգուտները։ Այդ պատճառով նա պահպանել է գոյութեան իրաւունք։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Ներքին գործերի մինիստրի յայտարարած վարչական սկզբունքները միայն մամուլի մէջ չը յարուցին միաբան համակրութիւններ, ոգեորութիւն։ Այդ սկզբունքների ողջունումը օր օրի վրա լայն հասարակական բնաւորութիւն է ստանում։ Ինչպէս գիտէք, քաղաքային և զէմստվօի ինքնավարութիւնները շատ պեցին հեռագրով իրանց անկեղծ զգացմունքները յայտնել պ. մինիստրին այն վստահութեան համար, որ նա ցոյց տուել է նրանց։ Ներքին գործերի մինիստրի յայտարարած սկզբունքները միայն մամուլի մէջ չը մնացին։ Նրանք գործադրվեցին։ Ինչպէս գիտենք, քաղաքային և զէմստվօի ինքնավարութիւնները ստացան հրաւէր՝ ուղարկելու իրանց ներկայացուցիչները Սանկտ-Պետերբուրգ՝ մի ընդհանուր խորհրդակցութեան համար։ Ինչպէս գիտենք, Սանկտ-Պետերբուրգի քաղաքային դումայի ներկայացուցիչները հրաւիրվեցին մասնակցելու խորհրդակցութեանը։ Ինչպէս գիտենք, Սանկտ-Պետերբուրգի

թեան համար, որ նա տածում է դէպի հասարակութիւնը և նրա օրգանները։ Օր չէ անցնում, որ այդ ցոյցերի մի այլ տայայտութիւն չը տեսնենք ժամուլի և հասարակութեանը մէջ։ Մամուլը ոգևորված յօդուածներ է գրում, լայն ու գեղեցիկ բացատրութիւններ է տալիս իշխան Սվեատօպոլկ-Միրսկու արտասանած խօսքերի առիթով։ Ամբողջ Ռուսաստանը քաղցր սպասողութեան մէջ է։ Դրութիւնը այսպէս է ընորոշում «Рус. Вѣд.» լրագիրը իր մի առաջնորդողի մէջ.

Գարնան հոտեր են գալիս... Այսպէս է ընդհանուր տպաւորութիւնը, այս են ասում հասարակութեան մէջ. այս է արձանագրում ժամուլը։ Եւ այսպիսի կենդանացնող տպաւորութիւն թողել են այն սակաւաթիւ խօսքերը, որ ասաց իշխան Սվեատօպոլկ-Միրսկին՝ ներքին գործերի մինիստրի պաշտօնի մէջ մտնելիս։ Լայն խոստումներ չեն տալիս այդ խօսքերը, նրանց մէջ չը կան որոշ խոստումներ, չը կան նոյն իսկ ակնարկներ, որոնք իրաւունք տային սպասելու այս կամ այն կարգադրութիւններին,—բայց և այդպէս, այդ խօսքերն էլ բաւական էին, որ հասարակութեան մէջ ոգևորութիւն առաջանար։ Դրա պատճառն այն է, որ ներքին գործերի նոր մինիստրի բերանից հասարակութիւնը լսեց այն, ինչ վաղուց առիթ չէր ունենում լսելու իշխանութեան բարձր ներկայացուցիչներից և ինչին նա սպասում էր վաղուց ջերմեռանութեամբ—այն է՝ վստահութեան արտայայտութիւն դէպի նրան և դէպի նրա ներկայացուցիչները։

Մի յետադարձ հայեացք գցելով անցեալի վրա, լրագիրը ի վերջոյ գալիս է այն եզրակացութեան, որ ներկայ տրամադրութիւնը նման է «նոր հոսանքների» ժամանակի տրամադրութեան։

Ներկայ բոպէն շատ բանով յիշեցնում է մի ուրիշ, համեմատաբար մեզանից ոչ այնքան հեռաւոր անցեալի բոպէն, այն ժամանակը, երբ, ինչպէս և այժմ, զգացվում էր, որ գարնան հոտեր են փչում, երբ իշխանութեան կողմից արտայայտված վստահութեան ազդեցութեան տակ հասարակութիւնը լցվեց յոյսերով և ակնկալութիւններով,—մի խօսքով այն ժամանակը, որ ստացել է «նոր հոսանքների ժամանակ» անունը։

Այդ ժամանակ մի շարք կարևոր մտաւորական միջոցներ մշակվեցին, որոնք և նկատի ունէին ազգաբնակութեան շահերը։ Բայց այդ աշխատանքները դեռ բոլորովին չեն վերջացած և այն յիշատակութեան արժանի ժամանակում յարուցած հարցերից շատերը դեռ այժմ էլ չեն ստացել վերջնական լուծում. այժմ պէտք է շարունակել։

Բայց որպէս զի այդ աշխատանքը ցանկալի պտուղներ բերէ, անհրաժեշտ է հեռացնել այն արգելքները, որոնց նա հանդիպում էր վերջին տարիները։ Անհրաժեշտ է, որ մամուլին ազատութիւն դրվի քննելու պետական և հասարակական հարցերը, անհրաժեշտ է, որ զեմստվոյի ժողովները չենթարկվեին անչափ սահմանափակումների՝ առարկաներ ընտրելու և դատելու կարգի ու միջոցների վերաբերմամբ. անհրաժեշտ է, որ վերացվեն իրանց բոլոր հետևանքներով այն միջոցները, որոնք ընդունված են գիտական ընկերութիւնների, ժողովների և այլ հասարակական կազմակերպութիւնների վերաբերմամբ և որոնք խանգարում էին կամ բոլորովին կարճել են նրանց գործունէութիւնը։

Այս պայմանների մէջ կարելի է սպասել հասարակական հարցերի բազմակողմանի մշակումը. իսկ այդ մշակումից կախված է Ռուսաստանի ապագայ առաջադիմութիւնը։

ՀԱԻԼԱԲԱՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

I

Հայոց դրամատիկ ընկերութիւնը յունվարից է սկսելու իր կանոնաւոր պարբերական ներկայացումները, իսկ մինչ այդ, ինչպէս նկատելի է այժմեանից, ժողովրդական թատրոնը փոխարինելու է մեծ թատրոնին։ Մեր լսելով, կազմակերպվել են մի քանի կանոնաւոր խմբեր բացառապէս երիտասարդներ, որոնք պարբերաբար տալու են ներկայացումներ Արաքսեանի թատրոնում։

Կիրակի, սեպտեմբերի 26-ին այդ նորակազմ ընկերութիւնը սկսեց իր գործունէութիւնը «Խանում» կոմէդիայով և «200,000» վոդեվիլով։ Ընտրութիւնը շատ լաւ էր։ Զափազանց ուրախացանք, տեսնելով, որ հասարակութիւնը շտապել էր իր ներկայութեամբ ողջունել խմբի առաջին ներկայացումը։ Դահլիճը ծայրէ ի ծայր լցվել էր մինչև ստորին դասակարգերով, այն աստիճան, որ շատերը կանգնած էին մնացել։ Դառնալով ներկայացմանը, չենք ուզում մանրամասնօրէն առաջ բերել բովանդակութիւնը և դերակատարների ցոյց տուած շնորհը, այլ առայժմ ընդհանրապէս կասենք, որ խաղը անցաւ լաւ, բաւական սահուն, միայն մի քանի անշնորհք դերակատարներ փչացնում էին պիէսի փայլը։ Աչքի ընկան պ. Արաքսեան իր հմուտ խաղով և կուպլէտներով և տ. Վարդուհի, որ ստեղծում և տալիս է մօտիքուլ Խանումի իսկական տիպը։ Կոմիկական (ծառայի) դերի մէջ բաւական շնորք է ցոյց տալիս պ. Խաչիկեան։ Հասարակութիւնը շատ գոհ և լաւ տպաւորութեան տակ դուրս ելաւ դահլիճից։

Յ. Ե.

II

Սեպտեմբերի 25 ին, Հալլաբարի Արաքսեանի թատրոնում, տեղի ունեցաւ հայ և վրաց թատերասէրների խմբի ներկայացումը։ Խաղացին վրացերէն լեզուով «Եղբայրասպան» պիէսը, հեղ. պ. Գրիգորեանի։ Այս պիէսը վերցրած է հալլաբարցիների իրական կեանքից, որը կատարվել է 1897 թ, և խաղացվեց առաջին անգամ։

Ինչպէս գիտենք Հալլաբարը, Թիֆլիսի յետ մնացած մասերից մէկն է կազմում։ Ցանկանալով, որ ժողովրդական բեմը իր կողմից նպաստէ Հալլաբարի առաջադիմութեան, պէտք է աշխատել Արաքսեանի և Մուրաշկոյի թատրոններում մատակարարել ժողովրդի, սրտին և ուղեղին մատչելի ներկայացումներ. բաւական չէ, որ մենք թատրոններ ունենք, այլ և մեզ հարկաւոր են նախ՝ օրինաւոր թատերասէր խմբեր, ղեկավարութեամբ բեմին լաւ ծանօթ անձանց և երկրորդ՝ պիէսների լուրջ և խելացի ընտրութիւն։

Շատ անգամ մենք նկատել ենք, որ ներկայացրած պիէսները անբաւարար են բովանդակութեան կողմից, իսկ երբեմն էլ լաւ պիէսները աջողութիւն չեն ունեցել վատ խաղի շնորհիւ։ Իբրև ապացոյց մենք ունենք անցած ներկայացումներից. «Դոկտոր Շտոկմանը», «Սամուէլը», «Զրկանքի զոհը», «Պատիւ» և այլն։ Երբ որ տեղի են ունենում բովանդակալի պիէսաների ներկայացումները և «սովորած» մարդկանց օրինակելի շարժուածները, այն ժամանակ, այդ թատրոնի «նոյն» դարաշրջանի դասակարգը պատկառանքով է մտնում թատրոնին և ուշադրութեամբ էլ հետևում է պիէսայի սիւժետին։ Իբրև օրինակ մեզ կարող է ծառայել այս գիշերվայ ներկայացումը։ Պիէսը ունի թերութիւններ, բայց իբրև ժողովրդի կեանքից վերցրած՝ նա հետաքրքրական էր։ Ամբողջ դահլիճը ուշադրութեամբ հետևում էր պիէսի խաղին, սկզբից մինչև վերջը։ Եւ եթէ գտնվում էին «չարաճճիներ», որոնք խանգարում էին այդ լռութիւնը, դրանք խլոյն և եթ լռում էին ամբոխի բուռն նկատողութիւնների ազդեցութիւնից։ «Եղբայրասպան» պիէսը պարզ կերպով պատկերացրեց տեղական կեանքի «կեղտոտ» և «տձև» վարքերի հետևանքը։ Այդ պիէսի շարժած հետաքրքրութիւնը ապացոյց է այն բանի, որ պէտք է պիէսները շօշափեն ժողովրդի հասկացողութեան մօտ երևոյթներ և մատչելի լինեն նրան։

Ա.

ՆԱՄԱԿ ՅՂՆԱՅԻՑ

Սեպտեմբերի 16 ին

Սեպտեմբերի 14 ին մեր գիւղն էլ վերջապէս այցելեց խօլերայի առաջն առնելու նպատակով նշանակված սանիտարական բժիշկը։ Ասում եմ վերջապէս, որովհետև ահա երկու շաբաթից աւել է, ինչ գիւղացիք սպասում և պատրաստվում են այդ «գալստեան»։ Որքան էլ որ գիւղացիք նախօրօք իմանալով բժշկի գալը, պատրաստվել էին, բայց և այնպէս բժիշկը գիւղը գտաւ բաւական կեղտոտ դրութեան մէջ։

Այդ օրը պ. բժիշկը գիւղում նշանակված սանիտարական հոգաբարձուների և մելիքի հետ միասին մաս եկան տները։ Դրանց ուղեկցում էր մի թուրք ուրեադնիկ այսպիսի դէպքերում «անհրաժեշտ» մտրակով։ Բժշկի ուշադրութեան միակ առարկաներն էին՝ արտաքնոցները և գոմերը։ Պարզվեց, որ շատ տներում արտաքնոցներ չը կան և գիւղացիք իրանց բնական պահանջները կատարում են կամ գոմում կամ բակում ու յետոյ սրբում ածում գոմը։ Շատ տներում նոյն իսկ տեղ էլ չը կայ արտաքնոց շինելու համար։

Մեր գիւղում, ինչպէս և շատ ուրիշ գիւղերում, տները այնքան իրարից մօտ են շինված, որ շատ տներում նոյն իսկ բակեր էլ չը կան։ Տների այսպէս խոռութեան պատճառը աւազակներից և կողոպուտներից վախն է, որը ստիպում է տները որքան կարելի է իրարից մօտիկ լինել։ Գիւղի բոլոր կեղտոտութիւնները թափվում են գետը և առուները։ Վերև ապրող թուրքերը հօ իրանց բնական պահանջները կատարում են միայն գետի ափերին, տարածելով այսպիսով սարսափելի գարշահոտութիւններ։

Այդ օրը պ. բժիշկը ոչնչացրեց 15 հատ փթած սեխ։ Բայց քանի հարիւրաւոր այդպիսի սեխեր ծախվել և կերվել են արդէն։ Կարելի է արդեօք մի անգամ այցելելով գիւղը (դեռ մեր գիւղը այն բախտաւոր գիւղերից է, որոնք արժանացան բժշկի այցելութեան, բայց կան և չարժանացածները) մաքրութիւն մտցնել այստեղ։

Ի հարկէ ոչ։

Այնտեղ, ուր մաքրում են միայն տուգանքի և բանտի սարսափից, ուր մաքրութեան անհրաժեշտութիւնը ինքը ժողովուրդը չէ զգում և հոգում, այսպիսի միջոցներ ոչ մի նշանակութիւն չունեն։ Եկաւ բժիշկը. տուգանքից և բանտից վախեցած ժողովուրդը արտաքուստ մաքրում է փողոցները և տները, գնաց նա, նորից տիրեց նոյն կեղտոտութիւնը և անտարբերութիւնը։

Այս տարի մեր գիւղացու համար բաւական անաջող անցաւ։ Մի կողմից մորեխը և ժանգը (ржавчина) բաւական մեծ վնաս հասցրին ցորենի ցանքսերին, միւս կողմից էլ մորեխի ետևից եկած թթի թռչունները կերան և փչացրին թութը և ծիրանը։ Խաղողը այս տարի աւելի լաւ է քան անցեալ տարի։

Ահա մի քանի օր է սկսել են անձրևային և ցուրտ եղանակներ։ Եթէ այսպէս շարունակվելու լինի, խաղողն էլ լաւ չի հասնի և կը սկսի փթել։ Սեպտեմբեր ամիսը, երբ սկսում են խաղողը և ընկոյզը հասնել, գողութիւնների սեզոնն է։ Օր չէ անցնում, որ այս կամ այն այգում գողութիւն չը լինի։ Գողերը բացառապէս Ստոպի թուրք գիւղացիք են, որոնք չունեն իրանց սեփական խաղողի այգիները։

S.

ՆՈՐՔԻՆ ԼՈՒՐՄՈՄ

Անցեալ օրը, սեպտեմբերի 28-ին, գեներալ Կուրոպատկինի տուած հրամանի առիթով (արշաւել առաջ) Թիֆլիսի բոլոր դպրոցներում մաղթանքներ կատարեցին, խնդրելով աջողութիւն ռուսական զէնքին։

—

Բագուից մեզ գրում են. «Սեպտեմբերի 25-ին խօլերայով հիւանդացել են 3 մարդ, իսկ մեռել են անցեալ օրերի հիւանդներից 8 հոգի։—26-ին՝ հիւանդացել են 6 և նախկին հիւանդներից մեռել են 3-ը։—27-ին՝ մեռել են 4 հոգի։ Բոլոր մեռածները թուրքեր են»։

—

Մայրաքաղաքի լրագիրների ասելով, տեղական ոստիկանութիւնը ձերբակալել է մի շատ հետաքրքիր կնոջ։ Մինչև այժմ խաչագողը հայերիս յատուկ մի տիպ էր. այժմ երևում է, որ ռուսների մէջն էլ կայ այդ տիպը և այն էլ ինչպիսին։—Ձերբակալվածը մի «ուխտաւոր» կին է, անունը Իրինա. արհեստով դերձակուհի է։ Նա գնում է եղել հարուստների տները, ճարտար լեզուով պատմում սուրբ երկրի մասին, այնտեղի տաճարներին օգնելու, այնտեղի սրբութիւնները վերաշինելու առիթով... և դրամ հաւաքում ու կամացուկ կորչում, որպէս զի մի ուրիշ տեղ մի ուրիշ անունով նոյն խաղը խաղայ։

—

Ռուսական Կարմիր Խաչի Կովկասեան բաժնի վարչութիւնը մեզ խնդրում է հրատարակել հետևեալը. «Կարմիր Խաչի գլխաւոր վարչութեան կարգադրութեամբ՝ նոյն հիմնարկութեան Կովկասեան բաժնի վարչութիւնը հաւաքում է նուէրներ պատերազմի դաշտից վերադարձած վիրաւոր և հիւանդ օֆիցէրներին բժշկելու համար, որ կատարվելու է երկրագործութեան մինիստրի նուիրած տան մէջ՝ Սոչիի մօտ, նախկին Խլուդովի կայքում։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը կազմել է քաղաք մտնող և քաղաքից դուրս եկող ապրանքների մօտաւոր վիճակագրութիւնը և մտադիր է պուդավճար վերցնել քաղաքի օգտին։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ գործող գործադիր յանձնաժողովի նիստում, որ կայացաւ սեպտեմբերի 28 ին, կարդացվեց ձայնաւոր բժ. Բաբեանի յայտարարութիւնը, որով պարոնը խնդրում է բոլոր դեղատոմսերը, որոնք բաց են թողնվում դեղատներից, ախտահանվեն հիւանդութիւնների տարածման առաջն առնելու համար։ Այդ հարցին դրական ելք տալու համար յանձնարարվեց բժիշկ Ռաղամատին դեղատների կառավարիչների հետ բանակցութեան մէջ մտնել միասին միջոցներ մշակելու անվնաս դարձնելու այն բոլոր իրերը, որոնք բաց են թողնվում դեղատներից։ 2) Որոշվել է խնդրել բոլոր թաղական հոգաբարձուներին նայել բոլոր դպրոցները, ուշադրութիւն դարձնելով մանաւանդ գիշերօթիկ դպրոցների վրա։ 3) Լսելով քիմիկոս պ. Ալիբէկեանի առաջարկութիւնը այն մասին, որ տեղական քաղցրաւենիքի, մանաւանդ թուրքերի գործարանատէրերը, կոնֆէտներ փաթաթելու համար բաժանում են կոնֆէտները և գործարանից դուրս աղքատներին էլ փաթաթելու, իսկ այդ միջոցով հեշտ է հիւանդութիւններ տարածել, որոշեց խնդրել ոստիկանապետին, պարտաւորացնել բոլոր գործարանատէրերին, կատարելու այդ գործերը գործարաններում։ 4) Որովհետև հոկտեմբերի 1-ից յանձնաժողովի միջոցները սպառված լինելու պատճառով անկարող է քաղաքիս փողոցները ջրելու, որոշեց խնդրել քաղաքին, որ վերջինս իր միջոցներով որքան կարելի է աւելի մեծ տարածութիւն ջրէ գոնէ այս վերջի ամիսը։ 4) Խնդրել երկաթուղու և զինուորական առողջապահական յանձնաժողովներին ուղարկել իրանց արձանագրութիւնները յանձնաժողովին, որպէս վերջինս զի տեղեակ լինի իրերի դրութեան հետ։ 6) Կարդացվեց քաղաքային լաբարատորիայի կառավարիչ պ. Ալիբէկեանի զեկուցումը Վէտցելի և Դիտրիխի գարեջրի գործարաններում գործադրվող ջրի մասին, որը, պարոնի ասելով, անկարելի է թոյլ տալ գործածել խմիչք պատրաստելու համար, որովհետև ջուրը գործածութեան համար վերցնվում է կուր գետի ամենակեղտոտ տեղից և ուրեմն ազգաբնակութեան կեանքը կարելի է դրանով վտանգի ենթարկել։ Քաղաքային ջրանցքի ջրով այդ գործարաններում միայն շիշերն են լուանում։ Լսելով զեկուցումը յանձնաժողովը վճռեց գործարաններից հեռացնել տալ այն բոլոր միջոցները, որոնցով ջուր են վերցնում կուր գետից։ 7) Որովհետև Սիոնի մօտ կուր գետի մէջ շատ կեղտոտութիւններ է թափվում, այդ պատճառով ինժենէր Զախմազասգեանը առ միշտ ափը ազատելու համար նրանցից խնդրում է յատկացնել 800 ռուբլի։

—

Վրաստանի ուղղափառ եկեղեցիների թեմական տեսուչ հայր Վաստօրգովը դիմելով Թիֆլիսի քաղաքային վարչութեան, խնդրում է իրեն յանձնել ամսիս 27-ին կայացած խորհուրդի և քաղաքային վարչութեան վճիռների պատճէնները։ Քաղաքային խորհուրդը իր վճռով մերժել էր հայր Վաստօրգովի խնդիրը Դիսէմմնեան հրապարակում մի կտոր հող յատկացնելու քարոզչական եկեղեցի կառուցանելու համար։

—

Վարշավայից հեռագրում են «Р. С.»-ին հետևեալը. «Ստուգված է, որ ինտէնդանտութեան տուած պատուէրը բանակին զգեստներ կարելու համար՝ աշխատանք է մատակարարելու 7,500 անգործ մնացած արհեստաւորների։ Ամսական 100,000 ձեռք զգեստ է պատրաստվելու։

—

Պետերբուրգի քաղաքային խորհրդի նախաձեռնութեամբ գիտութիւնների ակադէմիայում հարց է յարուցված հրատարակելու Ս.-Պետերբուրգ քաղաքի 200-ամեայ պատմութիւնը։ Քաղաքը մտադիր է մրցանակ տալ այդ մասին գրված լաւագոյն շարադրութեան համար։ Գիտութիւնների ճեմարանը մշակում է մրցանակի ծրագիրը։

—

Վրաստանի ուղղափառ եկեղեցիների թեմական տեսուչ հայր Վաստօրգովը Վրաստանի էկզարխի կարգադրութեան համաձայն դիմելով Թիֆլիսի քաղաքային վարչութեան, խնդրում է իրեն յանձնել ամսիս 27-ին կայացած խորհուրդի և քաղաքային վարչութեան վճիռների պատճէնները։ Քաղաքային խորհուրդը իր վճռով մերժել էր հայր Վաստօրգովի խնդիրը Դիսէմմնեան հրապարակում մի կտոր հող յատկացնելու քարոզչական եկեղեցի կառուցանելու համար։ Բացի դրանից ցոյց է տալիս, որ հարկաւոր է եկեղեցիներ շինել Կոլիւչի Բալկայում և երկուսն էլ մէկը՝ Կուկիայում, միւսը Վաղենցովի արձանի և Հալլաբարի մէջերքում։

«Русск. Пр.» թերթը հաղորդում է, որ լուր է պտտում, թէ շատ մօտ ժամանակներումս պէտք է վերաքննութեան ենթարկվի մամուլի մասին գոյութիւն ունեցող խիստ օրէնսդրութիւնը,

—

«Пет. газ.» լրագիրը հաղորդում է, որ հետևեալ տարում մատդրութիւն կայ կանանց բարձրագոյն կուրսերում բաց անել իրաւաբանական ֆակուլտէտ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ,

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Բալտիական Եսկադրան ե՞րբ կը հասնի։ «Indep. Belge» լրագրին հեռագրում են Պետերբուրգից, թէ գլխաւոր ծովային շտաբի ունեցած տեղեկութիւնների համաձայն, բալտիական էսկադրայի մեկնումը նշանակված է վերջնականապէս հոկտեմբերի 6 ին։ Ի նկատի ունենալով էսկադրային ճանապարհին ածուխ և ուտեստ հայթայթելու պայմանները, պէտք է մտածել, որ օժանդակ էսկադրան կը հասնէ իր տեղը 80 օրից ոչ վաղ։ Նոյն աղբիւրից թղթակիցը հաղորդում է, որ Պօրտ Արտուրի նաւահանգստում գտնվող բոլոր պատերազմական նաւերը ներկայումս վերանորոգված են և ծովապետ Վիրէնը, կանգնած ի գլուխ այդ էսկադրայի, մի քանի անգամ արդէն ծովն է դուրս եկել։ (Рус. Вѣд.)

Պատերազմը կը տեւի երկու տարի։ «Petit Parisien» թերթը հրատարակել է իր աշխատակցի խօսակցութիւնը Պետերբուրգի ֆրանսիական զինուորական կցորդի, գեներալ Մուլէնի հետ։ Շօշափելով ռուս-եապօնական պատերազմի հարցը, գեներալը ասաց, որ, նրա կարծիքով, պատերազմը իրերի կանոնաւոր ընթացքի մէջ, կը երկարաձգվէ գոնէ երկու տարի, որովհեաև ռուսները թոյլ չեն տայ ոչ մի միջամտութիւն ում և իցէ կողմից։ (Рус. Вѣд.)

Եապօնական երրորդ փոխառութիւնը։ «Times» լրագրին հաղորդում են Տօկիօից, որ եապօնական բանկի վարչութիւնը և աւելի խոշոր բանկիրները արդէն համաձայնութիւն են տուել վերցնել եապօնական պատերազմական 3-րդ ներքին փոխառութեան թղթերը 80 միլիոն իէն գումարի։ Փոխառութեան պայմանները նոյնն են, ինչպէս ե առաջին երկուսինը, այսինքն 5%-արեր փոխառութիւնը ընդունվում է 92-ի կուրսով և ժամանակամիջոցը—եօթը տարի։

Ուսեսի ու կերի պակասութիւնը։ «Daily Telegraph» լրագիրը մի քանի տեղեկութիւններ է բերում ուսեսի պաշարների գների մասին Մուկդէնում. հաւը արժէ 80 ամերիկական ցենտ (1 ր. 60 կ.), փոխանակ սովորական 3 ցենտի, խտացրած կաթը արժէ 80 ցենտ, մսային կոնսերվի մի փոքր տուփը՝ 2—4½ դոլլար և այլն։

Կոզակային զօրքի մի խորունժի. Լադիժենսկի անունով, հետևեալն է գրում. «Յուլիսի վերջին օրերը մենք գիշերը և ոչ մի անգամ չը քնեցինք. չը հանեցինք մեր կօշիկները և պառկում էինք փաթաթվելով միայն եափունջիների մէջ և բարձի տեղ թաթը դնելով մեր գլխի տակին։ Մեր բեռները ամբողջ ժամանակ մեզանից 30 վերստ հեռու էին։ Այդ ժամանակը սարսափելի էր և այն պատճառով, որ ուտելիքի կատարեալ պակասութիւն էր։ Ես այնպէս յետ եմ կանգնել ուտելու սովորութիւնից, որ շատ էլ չեմ ուզում։ Ճիշդ է, երբեմն աշխողվում էր ձեռք բերել հաւ կամ խոզենի, և ի հարկէ, ագահաբար վրա էինք թափվում այդ ուտելիքի վրա, բայց այդպիսի աշխողութիւններ սակաւ էին լինում. մեծ մասամբ մենք ուտում էինք մի տեսակ լաւաշ, որ թխում են գարուց և եփում լօրու իւղի մէջ։ Այդ իւղը զզուելի հոտ ունի, առաջին անգամ սիրտս խառնեց, բայց, սովածութիւնից, քիչ-քիչ սովորեցի։ Թշուառ ձիերը այնքան սոված ացել են, որ կատարեալ կմախք են դարձել։ Կեր չը կայ. վերջին անգամ նրանց տալիս էին տանիքներից փրցրած փտած յարդ։ Խոտ կայ, բայց օգտվել չէ կարելի, որովհետև եապօնացիները մեզանից մօտ են և ամեն րոպէ կարող ենք յարձակման ենթարկվել, ուստի ձիերին բաց թողնել չէ կարելի։ Մենք երեք օր նրանց սանձերը չէինք հանում։ (С. П. Вѣд.)

Եապօնացիները նոր զօրքեր են հանում։ Տօկիօից հեռագրում են Բերլին, որ միկադօն հրամանագիր հրատարակեց՝ կազմելու նոր 13 դիվիզիաներ, երկրորդ դասակարգի պահեստներից։ Ինչպէս յայտնի է, ամեն մի դիվիզիա բաղկացած է 15,000 հոգուց։ (Бирж. Вѣд.)

Եապօնացիների աջողութիւնները գերմանական տեսակէտից։ «Berl. Tageb.» թերթի պատերազմական քննադատը հեգնում է գերմանական այն լրագիրներին, որոնք գովաբանում են եապօնացիներին։ Նրա խօսքերով, այն հանգամանքը, որ եապօնացիները յաճախ ուշացնում են իրանց պատերազմական գործողութիւնները, խոշոր սխալ է ներկայացնում։ Եապօնացիների մինչև այժմ ձեռք բերած աջողութիւնների մեծ մասը—ասում է քննադատը—պէտք է վերագրվեն ոչ իրանց դրական գործունէութեան. յաճենայն դէպս, այդ աջողութիւնները առ այժմ այնքան չեն, որ եապօնացիներին տան վերջնական աջողութիւն։ Եապօնիային անհրաժեշտ է գործել որքան կարելի է արագաբար, որովհետև անսպառելի են այն աղբիւրները, որտեղից ռուսները քաղում են իրանց օժանդակութիւնը։ Եապօնացիների յապաղումը։ Լեաօեանի ճակատամարտից յետոյ բացատրվում է նրանով, որ նրանց պէտք էր ուժեղացնել իրանց զօրքերը։ Որովհետև եապօնացիները պահեստի զօրքեր ունեն, պակասորդը լրացնելու համար, ուստի բանակին աջակից ոյժեր տալը արդէն տեղի է ունեցել։ Բացի դրանից, գործին մասնակից են արել և խունխուզներին։ Ահա ինչու պէտք է մտածել, որ մարշալ Օյեաման կը փորձէ շուտով վերցնել Մուկդէնը։ (С. П. В.)

ԽՕԼԵՐԱՆ ԹԱՎՐԻԶՈՒՄ

—

Սեպտեմբերի 20-ին

Հակառակ թէ կառավարութեան և թէ պարսիկ մոլեռանդ ամբոխի գործ դրած բոլոր միջոցներին, որ խօլերայից հիւանդներին թագցնում են ընդհանրութեան վրա սարսափ չը տարածելու համար, այդ սարսափը սկսել է տիրել։ Չը նայած այն բանին, որ իւրաքանչիւր խօլերայի մասին խօսք անող պարսիկ ենթարկվում է ամբոխի ծաղրանքին և շատ անգամ ծեծին, այսօր դարձեալ աչքի են ընկնում օրական 15—20 մահացութեան դէպքեր։ Այդ 15—20-ը պէտք է հասկանալ կրկնակի նոյն իսկ եռակի, որովհետև ինչպէս ասեցի, այդ երևան եկածներն էլ հազար ու մի դժուարութիւնով է իմացվում։

Որ Թավրիզում—պարսիկների մէջ խօլերան մուտք է գործել, այն էլ մեծ չափով, փաստ կարող է ծառայել այն բանը, որ պարսիկ հարուստները և կառավարութեան մարդիկ անցեալում միշտ արհամարհանքով էին խօսում, նոյն իսկ հերքում էին Թէհրանի կոտորածը, իսկ այսօր լեղապատառ թողել փախել են Թաւրիզից։

Թավրիզից բացակայել են Թագաժառանգը, և շատ քիչ բացառութեամբ բոլոր յայտնի և հարուստ պարսիկները։ Օգտվելով Թագաժառանգի բացակայութիւնից, Թավրիզի վիճակը ենթարկված է կամայականութիւնների. հացը և ընդհանրապէս միւս ուտեստները թանգացել են։ Անցեալ օրը մի սէյիդ բազարի մէջ, ամբոխի ներկայութեամբ հայհոյում և անիծում էր այն բոլոր մարդկանց, որոնք հակառակ են խօլերայի տարածվելուն, առարկելով, թէ աւելի լաւ չէ՞ խօլերայից մեռնել, քան թէ այսպէս սովից տանջվելով կոտորվել...

Խօլերայի առաջն առնելու համար պարսիկները սկսել են հաւաքվել մզկիթները, աղօթել, մասիա կարդալ, սուգ անել, լալ, որ Աստուած խնայի Թավրիզին։ Օգտվելով հանգամանքից մօլլաները տարածել են ժողովրդի մէջ, իբր թէ՝ խօլերան երազում երևացել և ասել է՝ «ես պիտի ազատ թողնեմ Թավրիզի մուսուլմաններին, որովհետև նրանք շատ են աղօթում և լաց լինում։»

Եթէ խօլերան աւելի մեծ չափով չէ տարածվում, այդ էլ պէտք է վերագրել եղանակների սառնութեան։ Մօտ 10-ը օր է տեղում է անձրև. գիշերները համարեա թէ ցուրտ է։

Ամսի 18-ին Լիլաւա-թաղում հայերի մէջ եղաւ խօլերայի առաջին դէպքը։ Հիւանդութիւնը թեթև տեսակից է և այսօր երրորդ օրն է դէպի լաւն է գնում։ Դէթ հայերի թաղը վտանգից ազատելու համար սեպտեմբերի 5-ից կազմվել է սանիտարական խումբ։ Խմբի առաջին գործն է եղել հրատարակութեան տալ մի բրոշիւր դօքտ. պ. Ասլանեանի «Համառօտ խրատներ խօլերայից պաշտպանվելու համար» վերնագրով։

Սանիտարական խումբը, բացի տների և փողոցների մաքրութեանը հսկելուց, յանձն է առել հիւանդներին սկզբնական դեղեր բաժանելու, բժիշկ հրաւիրելու, խնամելու, նաև աղքատ ընտանիքներին սնունդ մատակարարելու պարտականութիւնը։

Սանիտարական խումբը իրան տրամադրութեան տակ ունի առանձին մասնաւոր բժիշկ, այն է Անգլիայում սովորած բժիշկ Յակոբեան, որը ի պատիւ իրան, պէտք է ասել իր յոժար կամքով իրան դրեց սանիտարական խմբի տրամադրութեան տակ առանց որ և է դրամական վարձատրութեան։ Խօլերայի դէպքեր են եղել նաև Արտաբիլի ճանապարհի վրա Նիր և Դուզդուզան գիւղերում։ Լուր է պտտում նաև Ուրմիայի և Սալմաստի մասին. այս վերջինները կասկածելի են։

Նամակս վերջացրել էի, որ իմացայ հետեւեալը. գիշերը վարակվել և առաւօտեան մեռել է մի հայ կին. ուրիշ երի 2 վարակվածներ կան։ Պարսիկների թաղերում խօլերան սաստկացել է, վարակուածները շատանում են։

Շհարի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ֆրանսիա։ Մինիստրների խորհրդի ժամակայ նիստում, որ կայանալու է հոկտեմբերի 1-ին, պէտք է մշակվի մինիստրութեան դէկլարացիան եկեղեցին պետութիւնից բաժանելու մասին։

Ներկայ կաբինէտի թշնամիներն օգուտ են քաղում, որ ծովային ամրութիւնները քննող յանձնաժողովը գտել՝ է ծովային պաշպանութեան գործի մէջ շատ թոյլ կողմեր։ Նրանք աշխատում են այդպիսի միջոցներով վարկաբեկ անել արմատական կառավարութիւնը։ Ծովային մինիստր Պելլըտանից ոչ պակաս յարձակումների առարկայ է և զինուորական մինիստր Անդրէն։ Հակառակորդները պնդում են, որ նրա օրով բանակի մէջ սաստիկ աճել է լրտեսութիւնը։

Անգլիա։ Սեպտեմբերի 20-ին մինիստր-նախագահ Բալֆուրը Էդինբուրգի պահպանողական կլուբում մի մեծ ճառ խօսեց Զէմբերլէնի առաջարկած պահպանողական մաքսերի առիթով։ Ես չեմ կարող, ասաց Բալֆուրը, ճիալ պահպանողական կուսակցութեան լիդէր, եթէ այդ կուսակցութիւնն իր ծրագրի մէջ կը մտցնէ պրոտէկցիոնիզմ, որը ձեռնտու կը լինի արդիւնագործութեան մի քանի ճիւղերի համար, բայց քայքայիչ միւսների համար։ Բայց նա իսկոյն խոյս տուեց այդ խիստ և որոշ լեղուից և առաջարկեց մի համագումար կազմել Անգլիայի բոլոր ազատ գաղութների և Հնդկաստանի ներկայացուցիչներից և քննութեան ենթարկել այդ հարցը։ Պահպանողական կուսակցութեան բոլոր խոշոր գործիչները տատանվում են այդ հարցի առիթով—չունեն մի ընդհանուր որոշ ծրագիր. նրանք արդէն պառակտվել են։

—Թիւրք կառավարութիւնը վերջացրել է իր բանակցութիւնները Կրէզօի գործարանի հետ. գործարանը պէտք է շինէ Թուրք կառավարութեան համար 4 ականանաւ՝ 517,500 ֆրանկ արժէքով։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

28 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 սեպտեմբերի։ Բէվէլից Յարսկօէ-Սելօ վերադարձան Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնան Թագաժառանգ Յեսարեվիչի հետ, և գեներալ-ծովապետը, որը շարունակեց ճանապարհը դէպի Պետերբուրգ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 28 սեպտեմբերի։ Ռուզվէլտ յանձնարարեց պետական դէպարտամէնտին մանրամասն բացատրութիւններ խնդրել Ռուսաստանից «Կալխասի» վրա եղած ամերիկան պօստի վերաբերմամբ։

ՉԻՖՈՒ, 28 սեպտեմբերի։ (Բէյտէր)։ Երէկ Դալնիից դուրս եկած եապօնացիների խօսքով, Նիպպօնեան զօրաբաժինը սեպտեմբերի 26 ին յարձակում գործեց Իշան բլրի վրա գտնվող փոքր դիրքի վրա. այդ ժամանակ զօրաբաժինը ստիպված եղաւ անցնել անձրևների պատճառով ջրով լցված փոսերի վրայով։ Ռուսները միայն թոյլ դիմադրութիւն ցոյց տուին, բայց նրանց արտիլէրիան ստիպեց եապօնացիներին թողնել դիրքը և յետ դառնալ փոսերի և պատնէշների վրայով։

Ասում են, որ երկու թղթակիցներ, որոնց աջողվեց մտնել Պօրտ Արտուր, դուրս կուղարկվեն առաջին յարմար դէպքում։ Նրանք ունեն հիւպատոսարանի վկայականներ, բայց Ստեսսէլ անբաւարար գտաւ այդ վկայականները։

ՏՕԿԻՕ, 28 սեպտեմբերի։ (Բէյտէր)։ Հաւատացնում են, որ ռուսական նշանաւոր ոյժեր,—անցնելով Խուն գետը, յարձակումն են գործում եապօնական դիրքերի վրա։ Եապօնական զօրքերը մեծ խմբերով արշաւում են հիւսիսային ուղղութեամբ. ասում են, որ կը սկսվի ընդհանուր ճակատամարտը։

ՇԱՅԿ։ Զէմստվօի ժողովը վճռեց փորձելու համար սկսել ուսումնական տարին մի դպրոցում յունվարից և զէմստվօների մի քանի դպրոցներում, ի նկատի ունենալով պակաս առաջադիմութիւնը, շարունակել ուսումը մէկ տարի, յանձնելով չորրորդ տարվայ ծրագրի մշակութիւնը ուսումնարանական խորհրդին, յատկացնելով 1000 ր. վարձատրութիւն այդ դպրոցներում դասատուներին։

Կ. ՊՕԼԻՍ, 26 սեպտեմբերի (Կօրր. Բիւրօ)։ Այսօր ստորագրվեցին վերջնական դաշնագիրները Կ. Պօլիս—Կոնստանցա կաբէլի կօնցէսիայի վերաբերմամբ։

29 սեպտեմբերի

ՏՕԿԻՕ, 28 սեպտեմբերի։ (Բէյտէր)։ Յայտարարված է «Խէյան» 1-ին կարգի մարտանաւակի կորստի մասին, որը սեպտեմբերի 5-ին գիշերը դիպաւ ականի Աղաւնու ծովածոցի բարձունքի վրա և ջրասոյզ եղաւ. խեղդվեցին համարեա 300 մարդ։ Երկու ոնտէրօֆիցէրներին և երկու նաւաստիներին աջողվեց հասնել մինչև մերձակայ կղզին, ուր ընդունվեցին նրանց օգնութեան ուղարկված նաւերի կողմից։ Կենդանի մնացածները պատմեցին, որ սեպտեմբերի 5-ին երեկոյեան «Խէյան», յանկարծակի փոթորիկի ենթարկվելով բաց ծովում, աշխատում էր վերադառնալ ծովածոցը, բայց դիպաւ լողացող ականին, որը և պայթեց։ Նաւը սկսեց ջրասոյզ լինել։ Նաւաստիները աշխատում էին իջեցնել մակոյկները, բայց նրանք լցված էին ջրով և նրանց մէջ գտնվողները խեղդվեցին ծովի սաստիկ յուզման պատճառով։ Եապօնական նաւատորմը խնամքով խուզարկեց այն տեղը, ուր տեղի ունեցաւ աղէտը, բայց ծառայողների մնացածները չը գտնվեցին։ Խէյանի էկիպաժը բաղկացած էր 211 մարդուց և պահակային ծառայութեան համար էր նշանակված։

ԲԱՐՑԷԼՕՆԱ, 28 սեպտեմբերի։ Վալլա-Նուովայում ձերբակալվեցին երեք անարխիստներ, որոնք խոստովանեցին, որ իրանք դաւադրութիւն էին կազմել մարտի 21-ին Ալֆոնս թագաւորի կեանքի դէմ։

ԿԻԵՎ, 28 սեպտեմբերի։ Երկաթուղիների ներկայացուցչի խորհրդակցութեան մէջ բացուս Վարշավա գծի անընդհատ հաղորդակցութեան հարցը բացասական կերպով վճռվեց։

Կ. ՊՕԼԻՍ, 28 սեպտեմբերի, (Յատուկ)։ Բոլգարներին հալածող յունական չէտաները երևացին Մօնաստիրի և Սալօնիկի վիլայէտների էլի մի քանի տեղերում։

Պատրիարքարանը հաղորդում է, որ բոլգարական չէտան սեպտեմբերի 22-ին յարձակվեց յոյների վրա և սպանեց Մէլնիկ կղզայի մի գիւղում երեք մարդ։

29 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնական տեղեկութիւններ չեն ստացված Հեռաւոր Արևելքից սեպտեմբերի 28-ին։—Ստացված տեղեկութիւնների համեմատ, Խարբին շատ հեռագիրներ են ստացվում, որոնց մէջ ստացողի հասցէն սահմանափակվում է, «հիւանդանոց» խօսքով։ Պօստերի և հեռագիրների գլխաւոր վարչութիւնը այդ հեռագիրների հասնելը չուշացնելու համար հրաւիրում է Խարբինի հիւանդանոցներում գտնվող անձանց անունով հեռագիր ուղարկվողներին նշանակել վերջինների հասցէը և անունը։—Նշանակված են Նորին Մեծութեան կաբինէտի կառավարչի պաշտօնակատար գեներալ-մայոր Բիդզէվսկի ներքին գործերի մինիստրի օգնական, ոստիկանութեան կառավարիչ և ժանդարմների առանձին կօրպուսի հրամանատար գեներալ լէյտենանտ Տօպօրնին—16-դ հետևակ կօրպուսի հրամանատար, 16-դ հետևակ կօրպուսի հրամանատար գեներալ-լէյտենանտ Բաղգօնօվ—վիրաւորների համար Ալէքսանդրեան կոմիտէի անդամ, գեներալ-լէյտենանտ Բուզսկի — մանջուրական 2-րդ զօրաբաժնի դաշտային շտաբի հրամանատար, գեներալ-մայոր Շվանկ—մանջուրական 2-դ զօրաբաժնի գեներալ-կվարտիրմէյստէր։

ՏՕԿԻՕ, 28 սեպտեմբերի։ Պրինց Անտոն Հոհէնցօլէրն երեկոյեան ճանապարհ ընկաւ դէպի գործող զօրքը։

ԲԵԼԳՐԱԴ։ Թագաւորի հրաւիրած ֆրանսիական օֆիցէրները գեներալ Պէրինի առաջնորդութեամբ կը գան հոկտեմբերի 2-ին և կը մնան 3 օր։ Թագաւորը նրանց համար Պարիզ արտակարգ գնացք է ուղարկում, որով նրանք նոյնպէս կը վերադառնան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ 16-րորդ կօրպուսի հրամանատար գեներալ-լէյտենանտ Կախանով նշանակվում է մանջուրական 2-րորդ բանակի արտիլէրիայի վերատեսուչ։

ՉԻՖՈՒ։ Սեպտեմբերի 28-ին։ (Բէյտէր)։ Այն ռուսները, որոնք նաւակով հասան այստեղ Պօրտ-Արաուրից, հաղորդեցին մինչև սեպտեմբերի 25-ը տեղի ունեցած նորութիւնները։ Նրանք ասում են, թէ սեպտեմբերի 22-ի գիշերը եապօնացիները գրոհ տուին Ֆանտաէ մարտկոցի հիւսիսային ամրութիւնների վրա, որի պահապան զօրքը յանկարծակի բռնվեց։ Ամենքը, որոնք չը կարողացան ազատվել, սպանվեցին։ Եապօնացիների յետագայ աջողութեանը արգելք դարձաւ բերդի կրակը, որովհետև նրա ցոլացուցիչների ճառագայթներով ճշդիւ որոշվեց դիրքը։ Եապօնական զօրագծերի վրա նկատվում է մեծ գոր-

ծունէութիւն։ Առաջաւոր դիրքերի վրա դըրված են թնդանօթներ, մանաւանդ արևելեան կողմում, ուր պատերազմական յենակէտը Դաղուշանն է։ Պօրտ-Արտուրում փոփոխութիւններ չը կան։ Զօրքը առաջվայ նման ուրախ է և հաւատացած, որ Կուրոպատկինը օգնութեան կը հասնի։ Բերդապահները չեն մտածում անձնատուր լինելու մասին։ Ուտելիքի պաշարեղէնն առատ է, թէև ոչ միատեսակ յատկութեան։ Զրհորները իրանց մէջ ունեն խմելու ջրի բաւականաչափ պաշար։ Զօրքերի առողջական վիճակը լաւ է։ Օֆիցէրները պաշտում են Մակսէլին, որ անխոնջ է աշխատանքի մէջ։ Միկադոյի կոչը, որով նա յայտարարում է զօրքին աւելի ևս մեծ եռանդ ցոյց տալ, այստեղի եապօնացիների կարծիքով, ապացոյց է, որ եապօնացիները նորից ծայրահեղ ջանք են գործ դնելու բերդը առնելու համար սինչև աշնան վերջը։ Եապօնացիները երկիւղով են նայում ձմերային պաշարման հնարաւորութեան վրա, թէպէտև բերդապահ զօրքն ևս մեծ դժուարութիւնների կը հանդիպի, եթէ ի նկատի առնենք նրա լուրջ դրութիւնը։

ՇԱՆԽԱՅ, 28 սեպտ. (Ռէյտէր)։ Եապօնացիները ընդունում են, որ սաստիկ կորուստներ են ունեցել Պօրտ-Արտուրի առաջ սեպտ. 13-ին և յոյս չունեն առնել բերդը մի ամսից վաղ։ Եապօնական զօրքերը Մանջուրիայում ստացան ուժեղ օժանդակութիւններ։ Եապօնացիները հաստատ են այն որոշման վրա, որ Մուկդէնից շատ դեպի հիւսիս չը շարժվեն։ Այդ տեղը կարևոր է ապահովացնելու համար ճանապարհը Լեաօեանից Իչժու, ինչպէս և երկաթուղին։ Եապօնացիները մտադրութիւն չունեն յարձակվել Տելինի վրա։—Աշնան ընթացքում Վլադիվոստոկի դէմ ցոյց կանվի Պօսիէտի ծոցի կողմից։—Երկու դիվիզիա ուղարկված են Գանղէն։ Թղթակիցները և զինուորական կցորդները ցուցմունք ստացան միանալ այդ դիվիզիաներին, որոնց իսկական նըշանակումը հանդիսանում է Սախալինը։ Եապօնական բարձր շրջաններում յայտնի է, որ Լեաօեանի մօտ եղած յաղթութեան հեղինակը զեներալ Նոդզուն է։ Մարշալ Օյեաման և գլխաւոր շտաբը արդէն հրաման էին տուել նահանջելու, բայց Նոդզին եռանդուն կերպով բողոքից, խնդրելով էլի մի յուսահատ ճիգն թափել։ այդպիսով եապօնացիները ամեն բան պարտաւոր են գներել Նոդզուին։ Ենթադրում են, որ Օյեաման և գլխաւոր շտաբը կը վերադառնան Եապօնիա։ Նրանք յետ կը կանչվեն այն պատրուակով, թէ բանակը պէտք է ձմեռային կայաններում տեղաւորվի։ Այն ժամանակ Նոդզուն կը նշանակվի ընդհանուր-հրամանատար։—Զեներալ Նասին կը նշանակվի Մանջուրիայի զինուորական նահանգապետ։ Եապօնիա են տարվել վիրաւորների և հիւանդների ահագին քանակութիւն։ Հաւատացնում են, որ միայն Կօրիայում 30000-ից աւելի կան։ Տաճարները և հիւանդանոցները լցված են, բայց եապօնացիները ոչ մի դժգոհութեան չեն հանդիպում բանակի համար զօրք հաւաքելիս։

ՊԵ ԵՐԲՈՒՐԳ։ Նշանակվում են Խաղաղ ովկիանոսի I էսկադրայի փոխ-ծովապետ Բեզոբրազովը՝ բալտիական նաւատորմի աւագ ֆլագման կոնտր-ծովապետներ—Վլադիվոստոկի նաւահանգստի հրամանատար Հաւապտ բալտիական նաւատորմի կրտսեր ֆլագման Գրեվէ—Վլադիվոստոկի նաւահանգստի հրամանատար և Իէսսէն—Խաղաղ ովկիանոսի I էսկադրայի հրամանատար։

ԵԱԼՏԱ, 29 սեպտ.։ Եկաւ «Գրոմոբոյ» կրէյսերի հրամանատար ֆլիգել-ադիւտանտ կապիտան Դաբիչ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱԲԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Զեռնարկութիւն Կայսերական Թատրոնների տրախտ Լ. Դ. Դօնսկու

Այսօր, հինգշաբթի, սեպտեմբերի 30-ին, մասնակցութեամբ տ.տ. Վ. Անտոնովայի, Մ. Բունակովայի, Զասլավսկայի, Փերարի, պ. պ. Լ. Դոնսկու, Լ. Օբրազցովի Ֆ. Գալեցկու, Ա. Գորուբինովսկու, Զալինսկու, Մուրատովի և Դեմիտովի։

Գարերը կը դնէ բալէտմէյստր Է. Ի. Զիմասի։ Զիւռեռական օրկէստրը պ. Ռիչչերիի ղեկավարութեամբ։

Կը ներկայացվի

«ՐԻԳՕԼԷՏՏՕ»

օպեր. 4 գործ. մուզ. Վէրդիի։

Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։

Հաղը, ուրբաթ, հոկտեմբերի 1-ին կը ներկայացվի «ԳԱԼԿԱ», օպերա 4 գործ., մուզիկա Մոնիուշկոյի։

Շաբաթ, հոկտեմբերի 2-ին 12-րդ ներկայացումն—Գալա. կը ներկայացվի մասնակցութեամբ Լ. Դ. Դոնսկու Իոհան Լէյդէնի, երաժշ. Մեէրբերի։

Կիրակի, հոկտեմբերի 3-ին կը ներկայացվի «ԼԱԿՄԷ», օպերա 3 գործ. մուզ. Դելիբայի։

Պատրաստում են ներկայացնելու Թիֆլիսում առաջին անգամ «ՆԷՐՈՆ» օպերան 5 գործ. 6 պատկ. Վերդիի մուզիկա։

Տոմսակները ծախվում են։

1—1 Կառավարիչ՝ Ի. Ա. Կէլլեր

Ազգագրական-Հրատարակչական Ընկերութեան

Վարչութիւնը խնդրում է հայ հեղինակներին ուղարկել իրան ինքնուրոյն աշխատութիւններ հրատարակելու, խոստանալով վարձատրութիւն տալ տպագրական թերթին 24—48 ր., որովհետև Ընկերութեան նպատակն է հրատարակել ինչպէս Ե. Լալայեանի «Ազգագրական Հանդէսը», նոյնպէս և գրքեր, գրքոյկներ, բարտէզներ և այլն։ Ընկերութեան բաժնեգինն է 50 ր. միանուագ կամ մաս մաս վճարելի։ Ընկերութեան բաժնետէրին ձրի ստանում է Ընկերութեան բոլոր հրատարակութիւնները, որ տյժմ հետեւեալներն են. «Ազգագրական Հանդիսի» VII—VIII, IX, X ու XI գրքերը և Ախվերդեանի «Հայ-աղուղները»։ Ընկերութեան անդամ կարելի է գրվել Վարչութեան փոխ-նախագահ տ. Շ. Լալայեանի և գանձապահ պ. Յովսէփ Ամիրխանեանի մօտ։

Աշխատութիւնները և «Հանդիսի» բաժանորդագինը սիրով ուղարկել Խմբագրական-Մասնաժողովի նախագահ պ. Ե. Լալայեանին։

Վարչութեան նախագահ՝ Ա. Մելիք-Ազարեան

(հ. շ.) 1—10

Լոյս տեսաւ և վաճառվում է

ՐԱՖՖԻ ԿԱՅԾԵՐ

II և III հատորները գինն է 3 բուբլի

Նոյնպէս կարելի է մեզանից ստանալ նոյն հեղինակի միւս աշխատութիւն «Դաւիթ-Բէգ» գինն է 3 ր. 50 կ.։ «Սամուէլ» գ. 3 ր. 50 կ., «Ոսկի Աքաղաղ» գ. 1 ր. «Ցանկահայը» գ. 50 կ.։ Շուտով կը վաճառվի նաև «Կայծերի» I հատ.։ Դիմել կանխավճարով՝ Баку Оганнесу Газанчіану. 1—3

Գերմանական համալսարանի լեզուաբանական բաժինն աւարտած

Մի փորձված ուսուցիչ

աւանդում է ԳԵՐՄԱՆԵՐԷՆԻ և ՀԱՅԵՐԷՆԻ դասերը։ Դիմել «Մշակի» խմբագրատուն. 1—3

Պահանջեցէք ամեն տեղ «ՕԴՕԲԻՆ»։

Միայն Միխաիլ Լեբեդեվի

„этикетъ утвержденъ прав." մակագրութիւնով։

Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում։

10, 20, 30 նոյ.—դ. 15 և 30 6—14

Կովկասի

Ոսումնական Շրջանի հոգաբարձական Խորհրդի որոշմամբ, որ հաստատված է Կովկասի քաղաքացիական պ. կառավարչապետի պաշտօնակատարի կողմից,

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ և Լ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

„ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ“

(3-րդ և 4-րդ տար.)

Զեռնարկի 2-րդ տպագրութիւնը։

համարված է պիտանի սկզբնական ուսումնարաններում գործադրելու համար։ 5—10

ԴԱՍԱԳՐՔԵՐ ԿՐՕՆԻ

Յատկապէս պատրաստած պետական դպրոցների համար, (թոյլատրված հոգևոր և ուսումնարանական վարչութիւններից) աշխատասիրութիւն Եղնիկ աւագ քահ. Երզնկեանի։

I. Առաջին գրքոյկ, պատրաստական դասարանների համար «Գրչաւոր աղօթքները (իրանց բացատրութիւններով) և տօների համառօտ պատմութիւնները» 5-րդ տպ. գինն է 20 կոպէկ։

II. Երկրորդ գրքոյկ, «Հին-ուխտ» (30 դասերի վերածած, ուսուցչի կրօնական—բարոյական զրոյցներով հանդերձ) 3-րդ տպ. գինն է 30 կոպէկ։

III. Երրորդ գրքոյկ, «Նոր-ուխտ» (32 դասերի վերածած, ուսուցչի կրօնական—բարոյական զրոյցներով հանդերձ) գինն է 30 կոպէկ։

Գրավաճառների, ուսուցիչների համար 30% զեղչում, առանց ճանապարհածախքի։ Դիմել Тифлисъ, прот. Езнику Ерзинкянцъ կամ Тифлисъ, Центральный книжный магазинъ.

(հ. հ. շ.) 19—25

ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ղեկավարութեամբ տ. Սիրանոյշի

Ներկայ 1904 թ. հոկտեմբերի 5-ից, Բագումի Հ. Զ. Ա. Թաղիեվի թատրոնում կը սկսի իր ներկայացումները, պարբերաբար, շաբաթական երկու անգամ երեքշաբթի և ուրբաթ օրերը։

Խմբի կազմակերպութիւնը՝ տ.տ. Զարուհի, Նոնիկեան, Սիրանոյշ, Ստեփանեան, Փառանձէմ, օր. Քնարիկ։ Պ.պ. Ազեան, Ալիխանեան, Աղայեան, Բերոյեան, Խաժակ, Ուսկանեան, Պետրոսեան, Սիմոն-Ղուլեան, Ստեփանեան, Վրոյր, Տիրացեան, Քոչարեան, Օհանեան։ Բէպերտուարը՝ «Աշխարհի դատաստանը» հեղ. Եղիշէ ծ. վ. Մուրադեանի, «Առաւօտեան ցողը» հեղ. Ս. Թառայեանի, «Երբ մեռեալներս արթնանանք» Իբսէնի, «Առասպել» Շնիցլէրի, «Ուժեղները և թոյլերի պաշտպան» Տիմկովսկու, «Մենակ մարդիկ», «Հիւանդ մարդիկ», «Խեղճ մարդիկ» Հաուպտմանի, «Դաւաճանութիւն» իշխ. Սումբաթովի, «Իրաւազուրկ կինը» Վլադիմիրովայի, «Բաղդադի իշխանուհին» Լեսինգ, «Ռիւի-Բլազ» Վ. Հիւգօի, «Կախարդ» Ֆօն Դրէյի, «Պտոյտ աշխարհի շուրջը 80 օրում» Ժիւլ Վէրնի, «Բարթուղիմեան գիշեր», «Ոճիր և պատիժ», «Ապուշ» Դոստոյևսկու, «Ֆեղրա» Բասինի, «Դքսուհի գը Շեվրեոզ», «Երկու քոյր» Դիւմա որդու, «Երկու գերդաստան» Էմիլ Օժիէի, «Դպրոցական ընկերներ» Ֆուլդի։ Բացի վերոյիշեալ պիէսներից սեզոնի ընթացքում կը խաղացվի մի քանի յայտնի, թէ ռուս և թէ օտարազգի հեղինակների պիէսները։ (հ. կ. 2—5

Մի պատանի, որը ցանկանում է լրացնել իր միջնակարգ կրթութիւնը, խնդրում է բարերարներից դրամական նպաստ, որպէս զի կարողանայ երկու տարվայ ընթացքում պատրաստվել ու վերջնական քննութիւն տալ որ և է գիմնազիայում՝ համալսարան մտնելու համար։ 400 բուբլիաչափ մի գումար կարող է հնարաւորութիւն տալ նրան հասնել իր նպատակին։ Հասցէն՝ Գանձակ, գրավաճառ Արշակ Մխակարեանցին (դիմել պատանուն վերջինիս միջոցով)։ 3—5

Մի չքաւոր՝ Նիկոլայ Տէր-Յակոբեան խնդրում է բարերարներից օգնել նրան իրանց նպաստներով։ Հասցէն՝ Պասանաուրեան փողոց № 23, տուն Բրեգվաձէ։ 3—3

Մի ՓՈՐՁՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴ ստանձնում է գրական աշխատանքներ.—թարգմանութիւն (ռուսերէնից), արտագրութիւն, սրբագրութիւն և այլն։ Դիմել Թիֆլիս, «Գուտտէնբերգ» գրավաճառանոցը, Յ. Ե. ին։ 2—

1865. Մոսկվա 1870. Ս.-Պետերբ. 1882. Մոսկվա 1896. Նիժնի-Նովգ.

ՄԻՄԻԼՅՈՆԱՎՈՐ

ուրիշ ոչինչ գրծուածքների համար

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ պատիվներ

(GRAND-PRIX)

ՊԱՐԻԶԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՒՄ

արժանացաւ Բուսասանի համար

ՄԻՄԻԼՅՈՆ

ՈՒԵՑԻՆԵՐԻՆԵՐԻ

ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ

Ընկերութիւնը Ս. Պետերբուրգում, որ հիմնված է 1860 թվին

Աշխարհի ամենամեծ գործարանն է, որ զբաղվում է միայն ոչ-ոք չունի

մանկական ոտնամանների թաւշեայ գործարանի գեղեցկութեամբ, ամրութեամբ և դիմացկունութեամբ։

Մեր գործարանի վաճառում է (Ռուսերէնով)։

ՄԵԿ ՔԱՅԼԱՄԲ ՎԱՃԱՌՈՒՄ Է

„ԴԻՕՊՈՒՐ ԴԵՒՑՇԵՒԼԻԷՐ“

Առևտրական Տունը

Ս. Պետերբուրգում, Մոսկվում, Բիգայում, Օդեսսա-

ՔԻՍՄԻՍ

(Դեմի վրա), Բաքուում, Եկատերինբուրգում, Տաշքենտում և

?—80

Дозволено цензурою. Тифлисъ, 29-го сентября 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 15.